# Testing

**ՆԱԽԱԳԻԾ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

**ՕՐԵՆՔԸ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**Հոդված 1.** Հայաստանի Հանրապետության 1998 թվականի հուլիսի 1-ի քրեական դատավարության օրենսգրքի 434[1] հոդվածի տեքստը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«1. Դատարանն իրավունք ունի հայտարարելու պատժի կրումից կամ վերահսկողությունից խուսափող դատապարտյալի հետախուզում՝ դատապարտյալի վարքագծի նկատմամբ վերահսկողություն իրականացնող իրավասու մարմնի կամ հսկող դատախազի միջնորդությամբ կամ սեփական նախաձեռնությամբ:

2. Հետաքննության մարմինը՝ օրինական ուժի մեջ մտած դատական ակտն ի կատար ածելու մասին կարգադրությունը ստանալուց հետո՝ եռօրյա ժամկետում դատապարտյալին չհայտնաբերելու դեպքում, հայտարարում է վերջինիս հետախուզում և կազմում հետախուզական գործ, որի մասին անհապաղ հայտնում է դատարանին և հսկող դատախազին:

3. Ազատությունից զրկելու հետ չկապված պատժի դատապարտված հետախուզվողին հայտնաբերելուց հետո իրավասու մարմինն անհապաղ, բայց ոչ ուշ, քան 48 ժամվա ընթացքում, հայտնաբերված հետախուզվողին ներկայացնում է դատապարտյալի վարքագծի նկատմամբ վերահսկողություն իրականացնող իրավասու մարմնին՝ այդ մասին գրավոր հայտնելով դատարանին, իսկ հսկող դատախազի միջնորդությամբ հետախուզում հայտարարված լինելու դեպքում՝ նաև վերջինիս:

4. Դատարանի նախաձեռնությամբ հետախուզում հայտարարելու դեպքում հայտնաբերված հետախուզվողին ներկայացվում է դատապարտյալի

վարքագծի նկատմամբ վերահսկողություն իրականացնող իրավասու մարմնին՝ այդ մասին գրավոր հայտնելով դատարանին, եթե այլ բան նախատեսված չէ հետախուզում հայտարարելու մասին դատարանի որոշմամբ։»։

**Հոդված 2.** Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը։